ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

---

*19 մայիսի, 2025 թ.*

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Ռուստամ Բաքոյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ ՌՈՒՍՏԱՄ ԲԱՔՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում՝

1) հանել «վերաբերյալ» բառը,

2) «մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության» բառերից հետո ավելացնել «, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» բառերը:

**Հոդված 2.** Սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 2-3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ"

«2. Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագը, իսկ Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագ ղեկավարի կողմից Պաշտպանին ժամանակավորապես փոխարինելու անհնարինության դեպքում Պաշտպանի աշխատակազմի հաջորդ դեպարտամենտի ղեկավարը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում Պաշտպանին փոխարինող դեպարտամենտի ղեկավարն իրականացնում է Պաշտպանին սույն օրենքով վերապահված լիազորությունները, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածով, 28-րդ հոդվածի 5-7-րդ մասերով, 29-րդ հոդվածի 1-7-րդ մասերով, 30-30.1-րդ հոդվածներով, 30.2-րդ հոդվածի 1-2-րդ և 5-7-րդ մասերով, 31-33-րդ հոդվածներով, 36-րդ հոդվածի 4-րդ մասով,

37-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ (բացառությամբ քաղաքացիական ծառայողների և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց՝ աշխատանքից ազատվելու մասին իրենց դիմումի հիման վրա սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված պաշտոնից ազատելու, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու հիմքով աշխատանքից ազատելու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակցի՝ պաշտոնի նշանակման համար դիմումի հիման վրա սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ պաշտոնի նշանակելու լիազորությունների) և 9-րդ կետերով սահմանված լիազորությունների:»:

**Հոդված 3.** Սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում «Բողոքը» բառը փոխարինել «Գրավոր բողոքը» բառերով:

**Հոդված 4.** Սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 2.1 մասով.

«Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումը պարունակում է անձնական տվյալներ կամ օրենքով պահպանվող գաղտնիք, ապա այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով բողոք ներկայացրած անձը սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում, ծանուցվում է որոշման կայացման և դրա տեսակի մասին, իսկ որոշման օրինակն ուղարկվում է բողոք ներկայացրած անձին անձնական տվյալների ու օրենքով պահպանվող գաղտնիքի տրամադրմանը օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:»:

**Հոդված 5.** Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 3.1 մասով.

«Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումը պարունակում է անձնական տվյալներ կամ օրենքով պահպանվող գաղտնիք, ապա այլ անձի իրավունքների և

ազատությունների պաշտպանության նպատակով բողոք ներկայացրած անձը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ծանուցվում է որոշման կայացման և դրա տեսակի մասին, իսկ որոշման օրինակն ուղարկվում է բողոք ներկայացրած անձին անձնական տվյալների ու օրենքով պահպանվող գաղտնիքի տրամադրմանը օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:»:

**Հոդված 6.** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ"

«Հոդված 29. Պաշտպանի լիազորությունները մարդու իրավունքների խթանման ոլորտում»:

2) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1 Պաշտպանն իրավասու է ներկայացնելու հատուկ կարծիք (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-7-րդ մասերով"

6. Պաշտպանն իրականացնում է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

7. Պաշտպանն իրավասու է խթանել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը, այդ թվում՝ իրականացնել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանության ուսումնասիրություն և մշտադիտարկում, խթանել մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ուղղված միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացումն (միանալը) ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին ներպետական օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը:»:

**Հոդված 7.** Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «Պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:

**Հոդված 8.** Սահմանադրական օրենքի 30.1 հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով.

«2. Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Պաշտպանին վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված գործառույթներ կարող են իրականացվել միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով:»:

**Հոդված 9.** Սահմանադրական օրենքի 30.2 հոդվածի 1-ին մասում և 2-րդ մասի 2-րդ կետում «մոնիտորինգ» բառը փոխարինել «մշտադիտարկում» բառով:

**Հոդված 10.** Սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասում «դեպքերում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հետազոտությունների արդյունքում» բառերը:

**Հոդված 11.** Սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 8.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1) սահմանում է Պաշտպանի աշխատակազմում էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, ինչպես նաև հաստատում է էթիկայի հանձնաժողովի կազմը.»:

**Հոդված 12.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 13. Պաշտպանի լիազորությունները դադարելը

1. Պաշտպանի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

2. Հրաժարականի դեպքում Պաշտպանի լիազորությունները դադարում են, եթե Պաշտպանի կողմից հրաժարականի դիմումը ներկայացնելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում կրկին հրաժարականի դիմում է ներկայացվում: Հրաժարականի հիմքով Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Պաշտպանը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում իր հերթական տարեկան հաղորդումը ներկայացվելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին ամփոփ հաղորդում:

Deleted: վերաբերյալ

3. Պաշտպանի լիազորությունների ժամկետն ավարտված է համարվում նրա՝ պաշտոնի ստանձնմանը հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

4. Ազգային ժողովի նախագահը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ լիազորությունների ժամկետն ավարտվելու հիմքի, համապատասխան տեղեկությունն ստանալու պահից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը պաշտոնական հաղորդագրություն է հրապարակում Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին: Հրաժարականի դեպքում սույն մասում նշված

հաղորդագրությունը հրապարակվում է Պաշտպանի կողմից կրկին հրաժարականի դիմում ներկայացվելուց հետո:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով Պաշտպանի լիազորությունները դադարելու դեպքում, բացառությամբ ժամկետն ավարտվելու հիմքով Պաշտպանի լիազորությունների դադարման դեպքի, Պաշտպանի ընտրությունն անցկացվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով հաղորդագրության հրապարակման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

*(13-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)*

**Հոդված 14. Պաշտպանին փոխարինելը**

1. Պաշտպանի ժամանակավոր բացակայության ընթացքում, այդ թվում՝ արձակուրդում գտնվելու, գործուղման կամ լիազորությունների դադարման դեպքերում նրա որոշմամբ իրեն փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարներից մեկը:

2. Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագը, իսկ Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագ ղեկավարի կողմից Պաշտպանին ժամանակավորապես փոխարինելու անհնարինության դեպքում Պաշտպանի աշխատակազմի հաջորդ դեպարտամենտի ղեկավարը:

Deleted: Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի տարիքով ավագ ղեկավարը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում Պաշտպանին փոխարինող դեպարտամենտի ղեկավարն իրականացնում է Պաշտպանին սույն օրենքով վերապահված լիազորությունները, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածով, 28-րդ հոդվածի 5-7-րդ մասերով, 29-րդ հոդվածի 1-7-րդ մասերով, 30-30.1-րդ հոդվածներով, 30.2-րդ հոդվածի 1-2-րդ և 5-7-րդ մասերով, 31-33-րդ հոդվածներով, 36-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ (բացառությամբ քաղաքացիական ծառայողների և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող

անձանց՝ աշխատանքից ազատվելու մասին իրենց դիմումի հիման վրա սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված պաշտոնից ազատելու, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու հիմքով աշխատանքից ազատելու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակցի՝ պաշտոնի նշանակման համար դիմումի հիման վրա սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ պաշտոնի նշանակելու լիազորությունների) և 9-րդ կետերով սահմանված լիազորությունների։

**Deleted:** Պաշտպանի բացակայության ժամանակահատվածում նրան փոխարինող դեպարտամենտի ղեկավարն իրականացնում է Պաշտպանին սույն օրենքով վերապահված լիազորությունները, բացառությամբ սույն օրենքի 26-րդ, 28-րդ հոդվածի 5-7-րդ մասերով, 29-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, 31-33-րդ հոդվածներով, 35-րդ հոդվածի 4-րդ մասով, 36-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ և 9-րդ կետերով սահմանված լիազորությունների։

### Հոդված 17. Բողոք ներկայացնելու ժամկետները և պահանջները

1. Բողոքը պետք է Պաշտպանին ներկայացվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին։

2. Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր ձևով։

3. Պաշտպանին ներկայացվող բողոքների համար պետական տուրք չի գանձվում։

4. Գրավոր բողոքը պետք է լինի ստորագրված՝ ներառելով բողոք ներկայացնող անձի ազգանունը, անունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը և հետադարձ կապի վերաբերյալ տվյալներ։ Բողոքի համար որևէ այլ հատուկ ձև չի սահմանվում։

**Deleted:** Բողոքը

5. Առցանց դիմելու կարգը հաստատում է Պաշտպանը։

6. Բանավոր բողոքների բովանդակությունը և սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված տվյալները գրավոր արձանագրվում են Պաշտպանի կամ նրա իրավասու ներկայացուցչի կողմից։

7. Պաշտպանին ներկայացված բողոքը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու համար:

*(17-րդ հոդվածը խմբ. 13.06.18 ՀՕ-355-Ն)*

**Հոդված 19. Բողոքի կապակցությամբ ընդունվող որոշումները**

1. Բողոքն ստանալուց և հաշվառելուց անմիջապես հետո Պաշտպանի սահմանած կարգով իրականացվում է բողոքի ուսումնասիրություն, որի հիման վրա Պաշտպանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) բողոքը քննարկման ընդունելու մասին.

2) բողոքը չքննարկելու մասին.

3) բողոք ներկայացրած անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.

4) բողոքն այլ մարմնի քննարկմանը փոխանցելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշման օրինակը Պաշտպանն ուղարկում է բողոք ներկայացրած անձին սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

2.1 Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումը պարունակում է անձնական տվյալներ կամ օրենքով պահպանվող գաղտնիք, ապա այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով բողոք ներկայացրած անձը սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում, ծանուցվում է որոշման կայացման և դրա տեսակի մասին, իսկ որոշման օրինակն ուղարկվում է բողոք ներկայացրած անձին անձնական տվյալների ու օրենքով պահպանվող գաղտնիքի տրամադրմանը օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

3. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում Պաշտպանը կարող է ընդունել նաև որոշում սեփական նախաձեռնությամբ քննարկում սկսելու մասին:

4. Բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման կապակցությամբ Պաշտպանի կայացրած որոշումները բողոքարկման ենթակա չեն:

Հոդված 26. Բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման արդյունքում պաշտպանի կողմից ընդունվող որոշումները

1. Բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման արդյունքում Պաշտպանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում հայտնաբերվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում.

2) մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման բացակայության մասին, եթե քննարկման ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում չի հայտնաբերվել.

3) մարդու իրավունքները կամ ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

4) բողոքի քննարկումը դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու՝ սույն օրենքով նախատեսված հիմքեր:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված որոշումը կայացնելու դեպքում Պաշտպանը խախտում կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար անձին կամ կազմակերպությանն առաջարկում է

ողջամիտ ժամկետում վերացնել խախտումը՝ նշելով մարդու իրավունքների կամ ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները:

3. Պաշտպանը բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ուղարկում է բողոք ներկայացրած անձին: Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

3.1 Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումը պարունակում է անձնական տվյալներ կամ օրենքով պահպանվող գաղտնիք, ապա այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով բողոք ներկայացրած անձը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ծանուցվում է որոշման կայացման և դրա տեսակի մասին, իսկ որոշման օրինակն ուղարկվում է բողոք ներկայացրած անձին անձնական տվյալների ու օրենքով պահպանվող գաղտնիքի տրամադրմանը օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

4. Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում նշված որոշման պատճենը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, դրա պաշտոնատար անձին կամ կազմակերպություն, որոնց որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, դրա պաշտոնատար անձը կամ կազմակերպությունը, որոնք ստացել են Պաշտպանի՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում նշված որոշումը, պարտավոր են այն ստանալու օրվանից հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան երեսնօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկել պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Պատասխանատվության ենթարկելու

առաջարկի հետ մեկտեղ Պաշտպանը կարող է առաջարկել կարգապահական տույժի տեսակը: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Պաշտպանի առաջարկը և արդյունքների մասին սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետում տեղեկացնել Պաշտպանին: Պաշտպանի առաջարկած կարգապահական տույժի տեսակը չընտրելու կամ անձին կարգապահական պատասխանատվության չենթարկելու դեպքում իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանին ներկայացնել համապատասխան հիմնավորում: Կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, ապա Պաշտպանը կարող է պատասխանատվության ենթարկելու առաջարկով դիմել իրավասու վարչական մարմիններին:

6. Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր առաջարկությանը չպատասխանած կամ դրանով նախատեսված միջոցառումները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրա պաշտոնատար անձի կամ կազմակերպության վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի առաջարկության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրա պաշտոնատար անձի կամ կազմակերպության պատասխանների հետ միասին կամ առանց դրանց:

Հոդված 29. Պաշտպանի լիազորությունները մարդու իրավունքների խթանման ոլորտում

Deleted: նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման հարցում

Formatted: Armenian

1. Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք:

2. Այն բոլոր դեպքերում, երբ Պաշտպանն իր գործունեության ընթացքում պարզում է, որ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերը օրենքով կամ որևէ այլ

իրավական ակտով կարգավորված չեն կամ ունեն ոչ լիարժեք կարգավորում, ապա Պաշտպանը կարող է համապատասխան առաջարկություն ներկայացնել իրավական ակտն ընդունող մարմին՝ նշելով իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտությունն ու սահմանները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված առաջարկությունը ստացած մարմինը պարտավոր է այն քննարկել և արդյունքների մասին սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետում տեղեկացնել Պաշտպանին:

4. Պաշտպանն իրավունք ունի դիմելու Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

4.1 Պաշտպանն իրավասու է ներկայացնելու հատուկ կարծիք (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

Formatted: Armenian

5. Աշխատակազմի մասնագիտական վերապատրաստումները և մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրերն իրականացնում է Պաշտպանը՝ իր աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կամ այլ հաստատության միջոցով: Պաշտպանը կարող է իրականացնել նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:

6. Պաշտպանն իրականացնում է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

7. Պաշտպանն իրավասու է խթանել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը, այդ թվում՝ իրականացնել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանության ուսումնասիրություն և մշտադիտարկում, խթանել մարդու

իրավունքների և ազատությունների ապահովմանն ուղղված միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացումն (միանալը) ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին ներպետական օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը:

*(29-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն, խմբ. 21.01.20 ՀՕ-15-Ն)*

**Հոդված 30. Պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության հարցում**

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է՝

1) իրականացնելու օրենսդրության՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթներին համապատասխանության մշտադիտարկում.

2) իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցերի ժամանակի և նպատակի մասին.

3) հանդես գալու երեխայի իրավունքներին առնչվող հրապարակային զեկույցներով.

4) իրավասու մարմիններ ներկայացնելու երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.

5) իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Պաշտպանին վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված գործառույթներ կարող են իրականացվել միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով:

**Deleted:** աշխատակազմի քաղաքացիական ծառայողների

*(30-րդ հոդվածը փոփ., լրաց. 13.06.18 ՀՕ-355-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-15-Ն)*

## Հոդված 30.1. Պաշտպանի լիազորությունները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է՝

1) իրականացնելու օրենսդրության՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների համապատասխանության մշտադիտարկում.

2) իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցերի ժամանակի և նպատակի մասին.

3) հանդես գալու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հրապարակային զեկույցներով.

4) իրավասու մարմիններ ներկայացնելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.

5) իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Պաշտպանին վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված գործառույթներ կարող են իրականացվել միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով:

*(30.1-ին հոդվածը լրաց. 13.06.18 ՀՕ-355-Ն)*

## Հոդված 30.2. Պաշտպանի լիազորությունները ազդարարների պաշտպանության հարցում

1. Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մշտադիտարկում և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Deleted: մոնիտորինգ

2. Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է՝

1) հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը,

2) իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մշտադիտարկում և գնահատում,

Deleted: մոնիտորինգ

3) հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով,

4) իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

4. Խորհրդատվության շրջանակում ձեռք բերված տեղեկությունները և անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման առանց անձի գրավոր համաձայնության:

5. Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա:

6. Հաշվետվությունը և վիճակագրությունն ամփոփվում և հրապարակվում են ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում (www.azdararir.am) և Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում (www.ombuds.am):

7. Հաշվետվությունը և վիճակագրությունը պետք է առնվազն տեղեկատվություն պարունակեն ազդարարների կողմից իրավասու մարմիններ ներկայացվող հաղորդումների (ըստ տեսակների և ձևերի) և ազդարարներին տրամադրվող պաշտպանության վերաբերյալ:

*(30.2-րդ հոդվածը լրաց. 07.12.22 ՀՕ-500-Ն)*

***(հոդվածի 5-րդ մասը 07.12.22 ՀՕ-500-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ է մտնում ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրության վարման կարգը սահմանող իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից)***

***(07.12.22 ՀՕ-500-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)***

Հոդված 31. Պաշտպանի տարեկան հաղորդումն ու զեկույցները

1. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում՝ նախորդ տարվա իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Ազգային ժողովում Պաշտպանի կողմից տարեկան հաղորդման ներկայացման կարգն ու ժամկետները սահմանվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով:

2. Պաշտպանի տարեկան հաղորդման կառուցվածքը, դրանում ներառված հարցերի շրջանակը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին ներկայացված առաջարկների արտահայտման ձևը որոշում է Պաշտպանը: Պաշտպանը հաղորդումը ներկայացնում է նաև պետական իրավասու մարմիններին և հասարակական կազմակերպություններին և հրապարակում նաև զանգվածային լրատվության միջոցներով:

3. Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերում, ինչպես նաև սույն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հետազոտությունների արդյունքում Պաշտպանը կարող է հանդես գալ նաև արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով, որոնք կարող են պարունակել ոչ միայն իրավունքների խախտման մասին դեպքեր և փաստեր, այլև մարդու

Deleted:

իրավունքներին և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

4. Պաշտպանն ապահովում է հաղորդումների և զեկույցների հրապարակայնությունը:

5. Պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում հրապարակում է առանձին զեկույց նախորդ տարվա գործունեության վերաբերյալ:

***(31-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)***

**Հոդված 39. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների և քարտուղարության կառավարումը և ղեկավարումը**

1. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների և քարտուղարության կառավարումն իրականացնում է Պաշտպանը: Պաշտպանը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների ընթացիկ գործունեությունը, ապահովում է դրանց առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացումը.

2) արձակում է պարտադիր կատարման ենթակա հրամաններ, հանձնարարականներ, ընդունում որոշումներ.

3) հաստատում և փոփոխում է Պաշտպանի աշխատակազմի աշխատողների քանակը և հաստիքացուցակը.

4) հաստատում և փոփոխում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերը.

5) նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայողներին և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

6) սահմանում է վերապատրաստման, գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, ներքին կարգապահական կանոնները և գործավարության (փաստաթղթաշրջանառության) կարգը.

7) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի հիման վրա սահմանում է Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կարգը.

8) քաղաքացիական ծառայողներին և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց իր որոշմամբ գործուղում կամ տրամադրում է արձակուրդ.

8.1) սահմանում է Պաշտպանի աշխատակազմում էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, ինչպես նաև հաստատում է էթիկայի հանձնաժողովի կազմը,

Deleted: սահմանում է էթիկայի հանձնաժողովի կազմը, գործունեության կարգը և լիազորությունների շրջանակը.

9) տալիս է Պաշտպանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

10) իրականացնում է Սահմանադրությամբ և սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Քարտուղարության ղեկավարումն իրականացնում է գլխավոր քարտուղարը: Գլխավոր քարտուղարը՝

1) օժանդակում է կադրային քաղաքականության, ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ապահովմանն ուղղված աշխատանքներին.

2) նշանակում և պաշտոնից ազատում է քարտուղարության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

3) ապահովում է Պաշտպանի աշխատակազմի գործունեության վերլուծությունը և ամփոփումը.

4) իրականացնում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդունման և հաշվառման, դրանց ժամկետների պահպանման հետ կապված աշխատանքները.

5) վարում է աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերը.

6) ապահովում է համացանցում Պաշտպանի պաշտոնական կայքի աշխատանքները.

7) ապահովում է Պաշտպանի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և գործուղման համար անհրաժեշտ կազմակերպական աշխատանքների իրականացումը.

8) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

3. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանման ղեկավարումն իրականացնում է ստորաբաժանման ղեկավարը: Ստորաբաժանման ղեկավարը՝

1) ապահովում է ստորաբաժանման նպատակներից և խնդիրներից բխող գործառույթների իրականացումը.

2) համակարգում է իր պատասխանատվության ներքո գտնվող բնագավառներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը.

3) իր պատասխանատվության ոլորտներում վերահսկողություն է իրականացնում Պաշտպանի հանձնարարականների կատարման նկատմամբ, արդյունքների մասին հաշվետվություն է ներկայացնում Պաշտպանին.

4) Պաշտպանի հաստատած կարգով ապահովում է ստորաբաժանման պատասխանատվության ոլորտին առնչվող փաստաթղթաշրջանառությունը.

5) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) հանդիսանում է Պաշտպանի ներկայացուցիչը այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

7) սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխարինում է Պաշտպանին.

8) սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ իրականացնում է Պաշտպանի պատվիրակած լիազորությունները.

9) իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

***(39-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.01.20 ՀՕ-15-Ն)***

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը.**

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) կիրարկման ընթացքում, ինչպես նաև Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականներում վեր հանված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

- Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրաժարականի հիմքով Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Պաշտպանը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում իր հերթական տարեկան հաղորդումը ներկայացվելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության վերաբերյալ ամփոփ հաղորդում:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում՝ նախորդ տարվա իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին:

Գործող իրավակարգավորումների համադրման արդյունքում ստացվում է, որ ի տարբերություն Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման՝ Պաշտպանի ամփոփ հաղորդումը բովանդակային առումով իր մեջ ընդգրկում է միայն Պաշտպանի՝ համապատասխան ժամանակահատվածում իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվի առնելով համապատասխան ժամանակահատվածում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին հաշվետվության կարևորությունն ու նաև հնարավորությունը դրա՝ հերթական տարեկան հաղորդման շրջանակներում չընդգրկվելու՝ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնելու Պաշտպանի ամփոփ հաղորդման բովանդակությունը:

- Սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի տարիքով ավագ ղեկավարը:

Մինչդեռ, Սահմանադրական օրենքով կարգավորված չէ այն հարցը, թե ով է փոխարինում Մարդու իրավունքների պաշտպանին Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում, երբ Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի տարիքով ավագ ղեկավարի կողմից Պաշտպանին փոխարինելն անհնարին է:

- Սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ Պաշտպանի բացակայության ժամանակահատվածում նրան փոխարինող դեպարտամենտի ղեկավարն իրականացնում է Պաշտպանին նույն օրենքով վերապահված լիազորությունները, բացառությամբ նույն օրենքի 26-րդ, 28-րդ հոդվածի 5-7-րդ մասերով, 29-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, 31-33-րդ հոդվածներով, 35-րդ հոդվածի 4-րդ մասով, 36-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ և 9-րդ կետերով սահմանված լիազորությունների:

Միևնույն ժամանակ, նշված բացառությունների շարքում բացակայում են Սահմանադրական օրենքի 30-30.1-րդ հոդվածներով, 30.2-րդ հոդվածի 1-2-րդ և 5-7-րդ մասերով նախատեսված լիազորությունները (համապատասխանաբար ): Մինչդեռ, հարկ է նկատել, որ նշված լիազորությունների իրականացումը հնարավոր է միայն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի ու Պաշտպանի հաստատության ընտրված մոդելն ու Սահմանադրական օրենքի ընդհանուր տրամաբանությունն ու մոտեցումները, ինչի համատեքստում Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի

սահմանադրական գործառույթների լիարժեք իրականացումն ու հաստատության առանցքային գործունեությունը ուղղակիորեն կապվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ներգրավվածությամբ ու առկայությամբ:

- Սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Պաշտպանը նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայողներին և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

Նախագծային կարգավորումներով նախատեսվել է այն, որ Պաշտպանի ժամանակավոր բացակայության ընթացքում, Պաշտպանի որոշմամբ իրեն փոխարինող Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարներից մեկը կամ Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինող դեպարտամենտի հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարը (Պաշտպանին փոխարինողը), ի թիվս այլնի, ունի քաղաքացիական ծառայողների և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց՝ աշխատանքից ազատվելու մասին դիմումի հիման վրա քաղաքացիական ծառայողի կամ Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոնից ազատելու, որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու հիմքով աշխատանքից ազատելու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակցի՝ պաշտոնի նշանակման համար դիմումի հիման վրա սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ պաշտոնի նշանակելու լիազորություններ:

Ներկայում, Սահմանադրական օրենքում նման կարգավորումների բացակայության պայմաններում քաղաքացիական ծառայողի կամ Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձի՝ աշխատանքից ազատվելու մասին դիմումի առկայության դեպքում վերջինիս դիմումի հիման վրա աշխատանքից ազատելու լիազորություն վերապահված է միայն Մարդու իրավունքների պաշտպանին: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ աշխատանքից ազատվելու մասին դիմումի առկայության դեպքում քաղաքացիական ծառայողը կամ Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձը չի կարող

ազատվել աշխատանքից Պաշտպանի բացակայության պայմաններում, ինչը խնդրահարույց է աշխատանքի ազատ ընտրության պատշաճ ապահովման տեսանկյունից:

Դրան զուգահեռ, խնդրահարույց իրավիճակ է ստեղծվում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակցի՝ պաշտոնի նշանակման համար դիմումի հիման վրա վերջինիս պաշտոնի նշանակելու լիազորության՝ միայն Պաշտպանին վերապահված լինելու պայմաններում:

Նշված կարգավորման նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված էր գործնականում առաջացած այն խնդրով, որ Պաշտպանի հրաժարականից հետո մի քանի ամիս շարունակ նոր Պաշտպան չէր ընտրվում, և Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայողները և այլ պաշտոն զբաղեցնող անձինք այդ ժամանակահատվածում չէին կարողանում սեփական դիմումի հիման վրա ազատվել աշխատանքից:

- Սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով կարգավորվում են բողոքի կապակցությամբ ընդունվող որոշումներին առնչվող հարցերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշման օրինակը Պաշտպանն ուղարկում է բողոք ներկայացրած անձին սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով կարգավորվում են բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման արդյունքում պաշտպանի կողմից ընդունվող որոշումներին առնչվող հարցերը, որի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանը բողոքի վերաբերյալ նույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ուղարկում է բողոք ներկայացրած անձին: Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածով նախատեսվում է նաև այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորությունը:

Վերոնշյալ իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական օրենքով Պաշտպանը պարտավորվում է բողոք ներկայացրած անձին ուղարկել համապատասխան որոշումների օրինակները նույնիսկ այն պայմաններում, երբ բողոքը ներկայացվել է այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով: Մինչդեռ, գործնականում առաջանում են իրավիճակներ, երբ բողոքի կապակցությամբ կայացվող որոշումները պարունակում են անձնական տվյալներ կամ օրենքով գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնք ենթակա են պաշտպանության:

- Նախագծային կարգավորումներն ուղղված են այդ թվում՝ Սահմանադրական օրենքի և Հավատարմագրման ենթահանձնաժողովի Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականների [1] պահանջներին համապատասխանեցմանը:

Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականներով բարձր են գնահատվում մարդու իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների խթանմանն ուղղված Պաշտպանի կողմից ձեռնարկված ջանքերը և խրախուսվում է Պաշտպանի կողմից համապատասխան փոփոխություններով հանդես գալը՝ համաձայն ուղղակիորեն ամրագրված իր խթանման մանդատին:

Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականներով նշվում է, որ Սահմանադրական օրենքը հստակ չի սահմանում Պաշտպանի՝ մարդու իրավունքների տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերը վավերացնելու կամ դրանց միանալու առնչությամբ առաջարկություններ ներկայացնելու լիազորությունը:

Ըստ Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ մարդու իրավունքների տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերը վավերացնելու կամ դրանց միանալու առնչությամբ առաջարկություններ ներկայացնելը, ինչպես նաև այդ փաստաթղթերի արդյունավետ իրականացման մշտադիտարկումը մարդու իրավունքների ազգային հաստատությունների հիմնական գործառույթն է: Հաշվի առնելով, որ Պաշտպանն

---

[1] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման հավատարմագրման ենթահանձնաժողովի զեկույցը, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/SCA_Report_March_2019_-_EN_.pdf:

իրականացնում է նման աշխատանքներ իրավակիրառ պրակտիկայում՝ Հավատարմագրման ենթահանձնաժողովը խրախուսում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով Պաշտպանի հստակ լիազորությունը՝ առաջարկություններ ներկայացնելու մարդու իրավունքների տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերը վավերացնելու կամ դրանց միանալու առնչությամբ:

- Սահմանադրական օրենքի 29-րդ հոդածով սահմանվում են Պաշտպանի լիազորությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման հարցում, որոնք մեծամասամբ մարդու իրավունքների խթանման գործառույթի շրջանակներում Պաշտպանի լիազորություններն են և, ըստ էության, լիազորությունների առավել լայն շրջանակ են ընդգրկում, քան Պաշտպանի լիազորությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման հարցում:

- Նշվածից բացի, Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված չէ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունը՝ Սահմանադրական դատարան ներկայացնելու հատուկ կարծիք (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, ինչը գործնականում տարիներ շարունակ Պաշտպանը Սահմանադրական դատարանի հետ համագործակցության համատեքստում իրականացնում է:

- Մարդու իրավունքների խթանման գործառույթի շրջանակներում Պաշտպանն իրականացնում է նաև մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Նշվածի իրավական հիմքը Սահմանադրական օրենքում բացակայում է:

- Բացի այդ, Սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ նաև արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով, որոնք կարող են պարունակել ոչ միայն իրավունքների խախտման մասին դեպքեր և փաստեր, այլև մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված

առաջարկներ: Այսինքն, ըստ Սահմանադրական օրենքի՝ արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների հիմքում կարող են ընկած լինել միայն հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերը կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումները: Մինչդեռ, գործնականում անհրաժեշտություն է առաջանում արտահերթ զեկույցներով կամ հաղորդումներով հանդես գալու ոչ միայն նշված դեպքերում, այլև մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտությունների արդյունքների հիման վրա:

- Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների կողմից Պաշտպանի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ անարգել այցեր իրականացնելու լիազորության կատարմանն ուղղված գործառույթներ կարող են իրականացվել միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով: Գործնականում անհրաժեշտություն է առաջանում նշված գործառույթներով օժտել ոչ միայն Պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին, այլև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող այլ անձանց:
- Համանման գործառույթը նախատեսված չէ նաև Սահմանադրական օրենքի 30.1-րդ հոդվածով, ինչի պայմաններում անհրաժեշտություն կա նախատեսելու կարգավորում նաև Պաշտպանի՝ հաշմանդամություն ունեցող անձանց գտնվելու վայր հանդիսացող հաստատություններ անարգել այցեր իրականացնելու լիազորության կատարմանն ուղղված գործառույթներով Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց օժտելու վերաբերյալ,
- Անհրաժեշտություն է առաջացել ամրագրել էթիկայի հանձնաժողովի ձևավորման առանձնահատուկ կարգը սահմանելու Պաշտպանի լիազորությունը, որի նպատակն է երաշխավորել Պաշտպանի հաստատության ինստիտուցիոնալ անկախությունը:

**3. Առաջարկվող կարգավորման բնույթը.**

««Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով.

1. հստակեցվել են Պաշտպանի լիազորությունները մարդու իրավունքների խթանման շրջանակներում, այդ թվում՝ ուղղված Սահմանադրական օրենքի և Հավատարմագրման ենթահանձնաժողովի Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականների[2] պահանջներին համապատասխանեցմանը՝ նախատեսելով, որ

- Պաշտպանն իրավասու է խթանել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը, այդ թվում՝ իրականացնել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանության ուսումնասիրություն և մշտադիտարկում, խթանել մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ուղղված միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացումն (միանալը) ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին ներպետական օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը.

- Պաշտպանն իրավասու է ներկայացնելու հատուկ կարծիք (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

- Պաշտպանն իրականացնում է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

2. հստակեցվել է, որ հրաժարականի հիմքով Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Պաշտպանը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում իր հերթական տարեկան հաղորդումը ներկայացվելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին հաշվետվությունը պարունակող ամփոփ հաղորդում,

---

[2] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման հավատարմագրման ենթահանձնաժողովի զեկույցը, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/SCA_Report_March_2019_-_EN_.pdf:

3. նախատեսվել է այն, որ Պաշտպանի ժամանակավոր բացակայության ընթացքում Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագը, իսկ Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարներից տարիքով ավագ ղեկավարի կողմից Պաշտպանին ժամանակավորապես փոխարինելու անհնարինության դեպքում Պաշտպանի աշխատակազմի հաջորդ դեպարտամենտի ղեկավարը,

4. նախատեսվել է, որ Պաշտպանի ժամանակավոր բացակայության ընթացքում Պաշտպանին փոխարինելու մասին որոշման անհնարինության կամ Պաշտպանի հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինող դեպարտամենտի հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարը, ի թիվս այլնի, ունի քաղաքացիական ծառայողների և Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոն զբաղեցնող անձանց՝ աշխատանքից ազատվելու մասին իրենց դիմումի հիման վրա քաղաքացիական ծառայողի կամ Պաշտպանի աշխատակազմում այլ պաշտոնից ազատելու, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալու հիմքով աշխատանքից ազատելու լիազորություն,

5. նախատեսվել է, որ Պաշտպանի ժամանակավոր բացակայության ընթացքում կամ Պաշտպանի հրաժարականի դեպքում Պաշտպանին ժամանակավորապես փոխարինող դեպարտամենտի հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարը, ի թիվս այլ բացառությունների, չի կարող իրականացնել Սահմանադրական օրենքի 30-30.1-րդ հոդվածներով, 30.2-րդ հոդվածի 1-2-րդ և 5-7-րդ մասերով նախատեսված լիազորությունները, այն է՝ համապատասխանաբար Պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության հարցում, Պաշտպանի լիազորությունները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում և Պաշտպանի առանցքային լիազորությունները ազդարարների պաշտպանության հարցում,

6. հաշվի առնելով Սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի ուժով այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորությունը և դրա հետ մեկտեղ անձնական տվյալների և օրենքով գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանության անհրաժեշտությունը՝ նախատեսվել են

Սահմանադրական օրենքով նախատեսված բողոքի կապակցությամբ և բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից ընդունվող որոշումների ծանուցման առնչությամբ առանձին կարգավորումներ,

7. նախատեսվել է, որ Պաշտպանի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ անարգել այցեր իրականացնելու լիազորության կատարմանն ուղղված գործառույթներ միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով կարող են իրականացնել ոչ միայն Պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները, այլև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող այլ անձինք:

8. նախատեսվել է Պաշտպանի՝ հաշմանդամություն ունեցող անձանց գտնվելու վայր հանդիսացող հաստատություններ անարգել այցեր իրականացնելու լիազորության կատարմանն ուղղված Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց գործառույթը,

9. նախատեսվել է Պաշտպանի՝ մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով իրականացրած հետազոտությունների հիման վրա արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով հանդես գալու հնարավորությունը,

10.նախատեսվել է էթիկայի հանձնաժողովի ձևավորման առանձնահատուկ կարգը սահմանելու Պաշտպանի լիազորությունը,

11. Սահմանադրական օրենքի որոշ դրույթներ հստակեցվել և նույն օրենքի այլ դրույթներին համահունչ են դարձվել: